Առաքել պատմագրի դամբարանի կառուցման համար ստացուած գումարի հաշիւը:

Այս մասին վերջին անգամ հաշիւ ներկայացրել ենք Արարատի 1899 թ. Յուլիս ամսի տետրի մէջ, յայտնելով որ պատմագրի դամբարանի կառուցման համար մեր ստացած երկու հարիւր քսան և ինը ռուբլի վաթսուն և մէկ կոպ. (229—61) գումարը յանձնուած է Երևանի պետական խնայողական արկղին № 2300 տետրակով ի պահպանութիւն և ի շահեցողութիւն, որից յետոյ այդ նպատակով մինչև այժմ ոչ մէկից ոչինչ չունինք ստացած: Այդ գումարը մինչև 1902 թ. Հոկտեմբերի 7-ն տոկոսիքով դարձել է երկու հարիւր յիսուն և եօթն ռուբլի 46 կոպ. (257—46): Կամենալով գործադրել իւր նպատակին՝ խնդրեցի արձանագործ պ. Անդրէաս Մարուքեանցին և վերջինս յանձն առնելով դամբարանի բոլոր հոգատարութիւնը՝ խոստացաւ մինչև 1902 թ. դարունը պատրաստել և խնայողական գանձարանից 1901 թ. Դեկտեմբերի 12-ին ստանալով յիսուն ռուբլի, նոյն օրը, երբև կանխավճար յանձնեցի պ. Ա. Մարուքեանցին: Ապա Նորա Փարիզից ինձ գրած նամակի համաձայն 1902 թ. Փետրվարի 2-ին Վաղարշապատի փոստատան միջոցով փոխադրել եմ Փարիզ իրեն պ. Ա. Մարուքեանցի անունով կրկին յիսուն ռուբլի, որպէսզի, ըստ իւր գրութեան, կարևոր բաներն այնտեղ պատրաստել տայ: Իսկ մնացեալ մի հարիւր յիսուն և եօթն ռուբլի 46 կոպն. (157—46) գերապատիւ Սուքիաս սրբազանի միջոցով յանձնուած է պ. Ա. Մարուքեանցին 1902 թ. Հոկտեմբերի 7-ին, որովհետև պ. Մարուքեանցը թէ իւր 15 Յուլիսի 1902 թ. գրած նամակով և թէ գեր. Սուքիաս սրբազանի նոյն տարուայ 15 Յուլիս № 466 գրութեան միջոցով, ուղարկելով մեզ մահարձանի նախագիծը, խնդրել էր և մնացեալ գումարը՝ խոստանալով մինչև նոյն տարուայ Հոկտեմբեր ամիսը պատրաստել: Հոկտեմբերի 16-ին մեզ նամակով հաղորդում է, որ ստացել է գեր. Սուքիաս սրբազանի միջոցով մնացեալ 157—46 կոպ., յայտնելով, որ եթէ եղանակները թոյլ տան, պատմագրի մահարձանը պատրաստ կլինի Դեկտեմբեր ամսին: Իսկ 1902 թ. Դեկտեմբերի 13-ին գրում է, թէ որովհետև ուրիշ պատուէրներ ունի ստացած, ուստի պատմագրի մահարձանն առաջիկայ տարուայ Մայիս ամսից շուտ չէ կարող վերջացնել, խնդրելով հանգիստ մնալ: Սակայն մինչև այժմ պարոնը չկատարեց իւր խոստումը:

Բարգեն վարդապետ Աղաւելեանց

Յ-9 Մարտի 1904 ամ.